

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ա Շ ՈՒ Ղ Ն Ե Ր

Ա Շ ՈՒ Ղ Ա Մ Ի Ր Օ Ղ Լ Ի

(ՆՐԱ ՄԱՀՈՒԱՆ 100—ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

(Շար. տես Բազմավէպ 1930 էջ 81)

ԱՄԻՐ ՕՂԼՈՒ ԵՐԳԵՐԸ

Ամիր օղու երգերը հաւաքւած չին առանձին մի զավթարում, այլ ցան ու ցրիւ են այս ու այն ձեռագիր տետրակների մէջ՝ ինչպէս երեւում է. աշուղը հոգ չի տարիլ իր երգերն առանձին մի զավթարի մէջ հաւաքելու: Նրա երգերից շատերը ձեռագիրների արտագրութեան ժամանակ փոփոխութեան և աղաւաղման են ենթարկւել, իսկ մի քանիսն էլ բերնից բերան անցնելով՝ կրճատւել և միացել են հազիւ մի քանի տողեր: Սակայն այն քուր երգերը, ինչ որ այսօր ունինք մեր ձեռքի տակ՝ պահել են իրենց վաղեմի հաւաքատուփերը:

Ամիր օղու ստեղծագործութիւնները կարելի է բաժանել երկու շրջանի. 1) խաղաղ և 2) փոքրկայից:

Առաջին շրջանն սկսում է 1757 թւին և տեւում է մինչև 1778 թւականը: Դա Շահ Փէրիմ խանի թագաւորութեան ժամանակաշրջանն է, որ մի նշանաւոր էլ է զբաւում պարսից պատմութեան մէջ: Արդ այն շրջաններից մէկն է, որ Պարսկաստանը քաղաքական համեմատաբար բարեկեցիկ կեանք է վարում: Շահը բարձրանալով գահի վրայ՝ զսպում է ներքին ապստամբութիւնները և ամբողջապէս նւիրում իր երկրի բարենորոգութեան և վերաշինութեան գործին: Նա Շիրազում կառուցել է տալիս գեղեցիկ ապարանքներ, շէնքեր, որոնք մինչև այսօր էլ դեռ կանգուն են և կազմում են Շիրազի ճարտարապետական զարդերը:

Բայց շահը ոչ միայն վերանորոգչական գործերով է զբաղւում, այլ և նա խիստ բարենաճ վերաբերմունք և հոգատարութիւն է ցոյց տալիս դէպ ի իր հպատակները, յատկապէս առանձին բարեացակամութեամբ է վարւում Նոր-Ջուղայեցիների հետ: Նրա թագաւորութիւնը տեւում է 21 երկար տարիներ, որի ընթացքում ժողովուրդն ապրում է խաղաղ ու հանգիստ պայմանների մէջ և լծւում իր աշխատանքին: Կեանքն առաջ է գնում իր բնական ուղիով, սակայն զբաղանքիմէնը: Գրականութիւնը, արեստները և կուլտուրական առաջխաղացումները խաղաղ ժամանակաշրջանի ծնունդ են: Սա մի պատմական ճշմարտութիւն է, որ կարող ենք տեսնել դարերի պատմութեան մէջ: Փէրիմի թագաւորութեան ժամանակամիջոցը այդպիսի մի նպաստաւոր շրջան էր: Եւ ահա այդ խաղաղ ժամանակաշրջանում էլ Ամիր օղին ստեղծագործում է իր երգիծական տաղերը, որոնց մէջ նա երգիծելով ծաղրում է իր ժամանակի Նոր-Ջուղայի ընտանեկան կեանքը, իր տիպիկ դէմքերով. բայց այդ մասին կը խօսինք քիչ յետոյ:

Երկրորդ շրջանը կազմում է 1779—1824 թւականը, որ ընդգրկում է երգչի յետագայ ամբողջ կեանքը: Այդ շրջանին նա գրում է իր խրատական, բարոյական երգերը, որոնցով նա մի շարք բարոյական խրատներ է տալիս իր ունկնդիրներին և ապա աշխարհի ունայնութիւնը պատկերացնելով՝ հրաժեշտ է տալիս իր կեանքին:

Ամիր օղլի, հինգ զազ կտուռ ան, զնա, աղատիքի ևս աշխարհի դարդ ու սարսն բնդ,

Սակայն երկրորդ շրջանում Ամիր օղլին ապրում է խռովայրոյ ժամանակներում։ Քննարկ խանից յետոյ եկող անիշ-խանութեան շրջանն է դա։ Շահի մահից յետոյ Պարսկաստանի քաղաքական դրու-թիւնը վրդովւում է։ Մի շարք բախտա-խնդիր նախարարներ՝ Ջէքի խան, Նազար Ալի խան, Ալի Մուրադ խան, Ալինազի խան, Մահմադ խան և այլն։ Իրանի գա-հին տիրելու նպատակով՝ զինուում են մի-մեանց դէմ, ոչնչացնում իւրար և անդա-դար խռովութիւններ յարուցանում։ Քա-ղաքական ներքին այդ փոթորիկների հետեւանքն այն է լինում, որ հպատակ ժողովուրդները, նա մանաւանդ Նոր-Ջու-զայի և Շիրազի հայերը ապրում են շատ ծանր պայմաններ մէջ։ Նոյն ցաւալի պատկերն է քաղցումն նաեւ գաւառնե-րում։ Լօռերն ու Բախտարացիները երկրում տիրող անիշխանութիւնից օգուելով՝ յար-ձակւում են անզէն և անպաշտպան գիւ-ղացիների վրայ, մեծամեծ գումարներ պա-հանջում և կամայական բռնութիւններով ճնշում, ստրկացնում են նրանց։ Ժողովրդի դրութիւնն աւելի անտանելի է դառնում, երբ սովը մուտք է գործում Պարսկաս-տանում։

Թէ ինչո՞ւ Ամիր օղլու երգերի մէջ չկան ժողովրդի ցաւերն ու տանջանքները նկարագրող երգեր. արդեօք նա չէ՞ երգել իր ժամանակի բռնակալների գործած բար-բարոսութիւնները։ Արդեօք նրա չօնգուրը չի՞ արձագանգել իր շրջապատի ժողովրդ-զի վշտերն ու ցաւերը։ Այս հարցերին իրականապէս պատասխանելու համար, տարաբախտաբար կուան չուսինք մեր ձեռքում։ Բայց անկարելի է մտածել, որ նա երգած չի լինի ժողովրդի տառապանք-ները։ Հապա ո՞ր են դրանք։ Ո՞վ գիտէ ո՞ր տան դարակի փոշիների ներքոյ, մի զրչեայ մատնանի մէջ, հանգչում են այդ կտորները, որոնց՝ գուցէ ժամանակը յայտ-նագործէ։ Այսպէս կամ այնպէս՝ այժմ

այսքանը պարզ է, որ այն բոլոր երգերը, ինչ որ ունինք երգչի ճնարից, մեծամաս-նութեամբ երգիծական բովանդակութիւն ունին և ցոյց են տալիս, որ Ամիր օղլին օժտւած է եղել թէ՛ աշուղ-երգչի յատ-կութիւններով և թէ՛ երգիծաբանութեան շնորհը է ունեցել։ Աւելին. նա իր դարի միակ կատակարան, երգիծող աշուղն է և հենց իր այդ ուղղութեամբ էլ ժամա-նակակից Պարսկահայ աշուղների տարե-գրութեան մէջ նշանաւոր տեղ է բռնում և արժանի է առանձին ուսումնասիրու-թեան։

Մենք մօտենալու ենք Ամիր օղլուն այդ տեսակէտից և վերլուծելու ենք նրան որ-պէս գաւառաբան-երգիծող։

1. Երգիծական երգերը։ Ամիր օղլու եր-գիծական երգերը ոչ միայն գեղեցիկ են և սրամիտ, այլ և յայտարար են նրա երգիծական ծիրըն։ Այդ երգերի մէջ աշուղը դրել է եւ սատիրա եւ հումոր։ Ինչ է երգել սակայն Ամիրը, հասա-րակական կեանքի ո՞ր էջն է հումորի են-թարկել, մարդկանց ո՞ր պակասութիւննե-րը և բարոյական թուլութիւնները ծաղրել և հեղեղել, ինչպիսի տիպեր է մտրակել և խարազանել։

Ամիր օղլին իր ապրած միջավայրում (գլխաւորապէս Նոր-Ջուղայում) երկար ժամանակ շփուելով զանազան ընտանիք-ների հետ, հնարաւորութիւն է ունեցել մօտիկից ուսումնասիրելու և ծանօթանալու այդ շրջապատի ընտանեկան կեանքի և բազմատեսակ բնաւորութիւնների ու զա-նազան տիպերի հետ։ Նա հետաքրքրու-թեամբ դիտել է ժամանակակից ընտանիքը և այդ միջավայրից էլ վերցրել իր նիւ-թերը։ Այդ երգերով տալիս է նա մեզ իր դարաշրջանի ընտանեկան կեանքի պատ-կերը, իր բացասական ու ծիծաղելի կող-մերով։ Այնտեղ տեսնում էք դուք մի շարք տիպեր, որոնց մեծ մասը, եթէ ոչ բոլորը, աշուղը վերցրել է իրականութիւնից։ Դուք տեսնում էք նրանց ընտանիքում, լսում էք նրանց խօսակցութիւնը, վէճը, բա-նակո՞րու։ Մանօթանում էք նրանց հետ,

որոնցից ամէն մէկն աչքի է ընկնում իր բնորոշ գծերով: Ահա, այնտեղ են ընտանիքի բռնակալ և «քաֆիր» պատուր, «արիւնհարութ» սկեսրայրը, կոտարար «տէգէրակիւնը» և անքրեա հարսը: Բնտանիքում հարսն և կեստուր կուում են անպաղար և թունաւորում ընտանեկան խաղաղ կեանքը: Կուում են նաեւ անվերջ երկու տէգէրակիւնները: Այգպէս՝ ընտանիքում ջարուռակ կուի, ծնծ, հայհոյանք, երկպառակութիւն. իսկ ինչ պիտի ուսանի այդ օշախի մէջ սնուող մանուկը: պարզ է, որ նա պիտի իւրացնէ այն ամէնը, ինչ տեսնում է իր շրջապատում: Այնտեղ է նաեւ ընտանիքի անանդ ազդիւր. նա ապրում է երազների մէջ, սիրոյ կրակն այրում է նրա մատաղ կուրծքը, բայց նա չի կարողանում սիրել, իր սէրն ազատ արտայայտել, որովհետեւ ընտանիքի բռնակալ պառաւ կաշկանդել, շղթայել է նրան և նա տանջւում, այրւում է անվերջ սիրոյ վառ զգացումով:

Ահա այս բոլորն աշուղին առատ նիւթ են մատակարարում և նա երգիծական ճնարը ձեռքին և ծիծաղը բերնին՝ սրամիտ ծաղրի և հեգնութեան է ենթարկում այդ երեւոյթները: Ահա ձեզ մի քանի նմուշներ.

Եար, եկ քեզ մին խբար տամ,
Տես ինչ լէվ արազ ամ տեսէլ.
Քո սկեսուրն մթին տեղ էր,
Կեսրօրիդ հասաղ ամ տեսէլ.

Նստէլ էր ուզտի քամակին,
Մին տէվ շվալ կէր շալակին.
Ճերմակ ձիգ շուրէր կէր խագին,
Էն էլ տասնչորս զազ ամ տեսէլ:

Սատանէթոց դա կիսաբէր,
Էդ տեւ որչափ չարադատ էր.
Լալման խարսին կիսոտէր,
Թէ շրումդ չարաղ ամ տեսէլ:

Այս և միւս մի քանի երգերից երեւում է, որ Ամիր օղլին ունի իր սիրոյ առարկան, իր սրտի թագունին: Թէ լինպէս առաջացաւ նրա մէջ այդ սիրոյ զգացումը, մեզ յայտնի չէ. այսքանը միայն պարզ

է, որ նա սիրահարւած է և օր ու գիշեր տանջւում է իր գեղեցիկ եարի սիրովը: Բայց երգիք չի կարողանում գնալ իր սիրականի տունը և նրան ազատ սիրել, որովհետեւ ընտանիքի բռնակալ պառաւը բարկանում է, «աշկէն խողում ա», եւրեմն էլ «կոնէն բռնում, շարտում ա, զցում առի ջուրն» և երգչին սաստիկ տանջանք է պատճառում: Այգպէս՝ երգչի համար ստեղծւած է մի անորոշ, տարտամ վիճակ և նա կարծես այդ դրութիւնից ազատուելու համար, դիմում է «ազիզ» եարին և իր վիճակը նրան պատկերացնում.

Սկեսուրդ աշկէն խողում ա,
Յեփ զոլման ամ, բարեանում ա.
Կոնէս բռնում շաղտում ա,
Գձում առուի ջուրըն՝ ազիզ:

Պառաւի ձեռքում երգիքը տանջւում է գերու նման և նրա ահ ու սարսափից միշտ վաղտնի է գնում «ազիզ»ի տունը: Մի օր էլ՝ փախչում է կտուրը, որ ազատի պառաւի ձեռքից, բայց «բիւթօրվաթ քաֆէրն աթարոցն և դանակն» առնելով՝ բարձրանում է Ամիր օղլու ետեւից կտուրը, փակում դուռը և ծակծակում է խեղճ աշուղի մարմինը.

Կտուրն ելա՛յ՝ դուռն փակէց,
Աթարոցն իւնէ՛ց՝ թակէց.
Վէր գձէց, ջանս ծակծակէց,
Դանակ կէր խտուրն՝ ազիզ:
Համ կծակէր, համ կկծէր,
Համ յետ կդառնէր, կանիծէր.
Ոգում էր արունս ծծէր,
Էդ բիւթօրվաթ քաֆէրն՝ ազիզ:

Բայց անքրեա պառաւը դրանով էլ չի բաւականանում. նա շամփուրը տաքացնում և վազում է երգչի ետեւից, որ դադի նրա մարմինը.

Էդ քաֆէրն տէր դօշաղ էր,
Դեռ լէվ էր, որ նաչաղ էր.
Ոգում էր ջանս դաղաղէր,
Բերէլ էր շամփուրն՝ ազիզ:

երգիչը յուսահատած աղաչում է պա-
ռաին և չորս անգամ նրա ձեռքը համ-
բուրում, որ իրեն խնայի, բայց «շուն»
պառաւը, մթին հաշտում բռնում է երգչին
և մի լաւ ծնծում:

Եկաւ բռնեց մթին հաշտին,
Վեր կոխեց, թքեց իւր մշտին.
Ամիր օղլուս կող ու կշտին,
Տփեց չուր խէրուրն՝ ազնիւ:

Սակայն պառաւը միայն աշուղին չէ,
որ տանջում է, նա դառնացնում է նաեւ
իր մարդի վիճակը: Այսպէս, նա ցան-
կանալով ազատ ապրել և կեանքի բարի-
քը միայնակ վայելել, իր մարդին «խա-
բով» գրեղն է ուղարկում և միայնակ
ուտում է տան իւղն:

Աւր մարդին տվեց դեղն,
Խաբով դրկեց յերկար գեղն.
Մարդին գաղտնի կերաւ եղի,
Էս անիծած, գող պառաւն:

Անցնում են օրեր: Մարդը վերադառ-
նում է գիւղից, սակայն «հաշտան քօփակ
պառաւը» բռնում է մարդու բեղիցն և
դուրս անում նրան տանից:

Մարդն յետ եկաւ գեղիցն,
Պառաւն բռնեց բեղիցն,
Դուրս արաւ մարդին տանիցն,
Հաշտան քօփակ պառաւն:

Այնուհետեւ պառաւն օրերով քէֆ է ա-
նում, բոլորի հետ դումար խաղում, մազ-
դաքի ծամում, երբեմն էլ՝

Մարդի միրուքն էր նա խուզում,
Ձեռնէրով աչքերն էր բզում.
Սիրտն ջահէլ մարդ էր ուզում,
Ձէր ամալման շուն պառաւն:

Վերջ ի վերջոյ հեշտասէր պառաւը
թողնում է իր մարդուն և ամուսնանում
մի ջահէլի հետ: Իսկ

Խարսանիքին պատիւ արաւ,
Ողջ մարդկէրանց տունն տարաւ,
Ինչ որ եփեց յինքն կերաւ,
Քաղցած թողէց դեւ պառաւն:

Անեքեւս պառաւից յետոյ, Ամիր օղլին
մի այլ տեղում, երգի նիւթ է դարձնում
անեքեւս հարսնիւրին, որոնց աշուղին խա-
բիւով տուն են տանում և սկսում են
ծնծել:

Նարինջ տըվին, ասին՝ արի-
նս էլ մին փոքր թամախկ արի-
նրբ տուն տարան, քեզի բարի,
Տես թէ ինչ քօթակ ին տալման:

Գծէլ ին մին մթին օթախ,
Սպանում ին նահախ-նահախ.
Վրայ ին դարձէլ աջ ու ձախ,
Չոք գմեջ դանակ ին տալման:

Հարսնեքից հետոյ Ամիր օղլուն, Նոյն
դրութեան են ենթարկում երկու «գեօ-
զալ» ներք. նրանք երգչին նարինջ են
տալիս, «խաբխարում», տուն են տանում,
փայտերն առնում և սկսում են ծնծել:

Նարինջ տըվին, խաբխաբեցին,
Տուն տարան, փէտերն յափեցին.
Չոք գմեջ վերէս թափեցին,
Համ աջ և համ ձախ ին տալման:

Ինչանք տվին խեւացէլ ի,
Ոսնգս թռէլ, սեվացէլ ի.
Թէ մին էլ արեւացէլ ի,
Ջազմ որ կուլէս կախ ին տալման:

Առհասարակ Ամիր օղլու երգիծական
ոտանաւորները մէկը միւսից աւելի ծիծա-
ղաշարժ են և սրամիտ: Այդ տեսակէտից
նրա ձիրքը միանգամայն ինքնուրոյն է:

Բայց մի հանգամանք պէտք է նկատի
ունենալ. այդ այն է, որ երգչի նպատակը
չէ եղել իր ոտանաւորներով ընթերցող-
ներին ծիծաղեցնել և զարճացնել, այլ,
ընդհակառակը, նա երգիծական ցննա-
դատութեան ենթարկելով իր ժամանա-
կաշրջանի ընտանիքը և նրա տիպարները,
ցոյց է տալիս նրանց պակասաւոր կող-
մերը և պարսաւում:

Թէ ինչպիսի ակորձ ձեւով և ժողովրդ-
դական ոգւով են հիւսւած այդ ոտանաւոր-
ները, դրա բնորոշ ապացոյցն այն է, որ
այսօր Ամիր օղլու ժամանակից անցել է
մի ամբողջ դար և դեռ այդ երգերը քէ՛

Նոր-Ջուղայում և թէ՛ Սպահանի փէրիա և Չարմահալ զաւանհերում երգւում են ժողովրդի մէջ՝:

2. Խրատական բարոյական Սմիր օղլին բացի երգիծական ոտանաւորներից՝ թողել է նաեւ ուշադրութեան արժանի մի քանի խրատական բարոյական երգեր էլ, որոնք ցոյց են տալիս, որ աշուղը իր ժամանակի զիտուն, փորձառու և իմաստուն մարդկանցից մէկն է եղել: Այդ երգերից մէկում նա անպակաս խօսքերով խրատում է աղամորդուն, դժբախտութեան ժամանակում երկար համբերել, թէ՛ բարեկամի և թէ՛ թշնամու միշտ հաւասար ներել և բախտի վրայ չբարկանալ, չսրտոնեղիլ, այլ ընդհակառակը, միշտ ջանալ և միշտ նեղութիւն կրել, մինչեւ բախտի օգնելը: Մի ուրիշ տեղ աշուղը խրատում է աղամորդուն, զիշեր ցերեկ Աստուծոյ աղօթել, հեռու մնալ չար ճանապարհից և չգնալ չար գաստանի թեւովն: Ապա նա աշխարհային կեանքի ունայնութիւնը պատկերացնելով յորդորում է «գովաթ» և գանձ չդիզել, որովհետեւ այդ ամենը անցողական են և ապարդիւն: Նա յիշեցնում է մեր մահաւան օրը և խրատում է բարի գործել: Այնուհետեւ իր խօսքն հարստին ուղղելով, ասում է.

Դու միշտ յուսացէ՛լ աս քո աշխատանքն,
Միտ չես ածում յետիդ օրէն վախճանքն.
Էդքան որ բոլորէ՛լ աս դովաթ ու կայքն,
Եսաբբ ինչ կտանես էս աշխարհէն քեզ:

Իսկ մի այլ տեղում Սմիր օղլին, իբրեւ բարի ձերունի, խրատում է իմաստուն մանուկին, որ իր հօրն ուրախացնի և չլինի նրա համար տրտմութիւն. աշուղն ասում է, որ բարի զաւակը ծնողաց համար պարծանք է և իւրաքանչիւր քաջ զաւակ, նախ այդ մասին պիտի մտածի: Ապա նա խորհուրդ է տալիս մանուկին արի լինել և միշտ զբարի նախանձով, խրատ ու սան.

ձով՝ կառավարել, Նոյնպէս խրատում է՝ հեռու մնալ կեղծաւոր մարդից և չհաշտնել նրա «մորթիցը» որովհետեւ՝

Կեղծաւորի բերանն սէվ կարճի բուն ա,
Երակնէն լցրած մահաբեր թոյն ա.

Կամ՝
Կեղծաւորի օիրտն սատանի տուն ա,
Չարութիւն ժողկունքով դեմ գարուն ա.
Գարշառտ բերանն լիքն արուն ա,
Այն օրն կթափի, երբ ասի քեզի:

3. Միւս երգերը: Բաց ի յիշած տեսակներից՝ աշուղը թողել է նաեւ մի քանի հատ դիմառնական այլաբանութիւններ ոչխարի և գէլի, մկան ու կատիւ. սկեսւրոջ և հարսի, երկու տէգէրակնոջ և մի հատ էլ հակադարձ երգ: Ընդամենը հասել է մեր ձեռքը 17 երգ, որոնց հանել ենք Նոր-Ջուղայում (Պարսկաստան) և կալկաթա (Հնդկաստան) գտնւած ձեռագիր տետրակներից: Թէ՛ բաց ի յիշեալ երգերից, արդեօք որեւէ երգեր էլ ունի Սմիր օղլին, այդ մեզ յայտնի է, թէ՛ և հաւանական է:

4. Լեզուն և աճը: Սմիր օղլին անւած և մեծացած լինելով Նոր-Ջուղայում, իր երգերն էլ, զխաւորապէս երգիծական. ները, զրել է Նոր-Ջուղայի բարբառով: Այդ երգերի մէջ իշխում է Ջուղահայերի ոճերն ու դարձածները, նրանց քերականական ձեւերն ու բառերը: Եւ իսկապէս այդ երգերը զրաւոր յիշատակարան են Նոր-Ջուղայի բարբառն ուսումնասիրելու համար:

Նրա ոճը պարզ է և ընտիր: Լեզուն իր ժամանակի բարբառի համեմատ գեղեցիկ է, որը սակայն կրում է իր մէջ բազմաթիւ պարսկերէն և թրքերէն բառեր:

5. Եզրակացութիւն: Սմիր օղլին Պարսկահայ աշուղական երգիծական գրականութեան անմասն երգիչն է: Իրբեւ երգիծաբան, նա իր ժամանակակից ընտանիքի և նրա տիպարների թերութիւնների ու բարոյական թուլութիւնների պատկերն է հանդէս բերում և խարազանում: Խարազանում է նա դարաշրջանի « քաֆէր » պառակն, բռնակալ սկեսւրոջ, աներես

1 Այդ երգերի հղանակները թէ՛ իրենց մտիւններով և թէ՛ ոճի մով զանազանում են միմեկից և որոշ տրամադրութիւն ստեղծում:

հայրաներին, կուտարար տէգէրակնով, ցոյց տալով նրանց թիթեւամիտ բարքերն ու պակասութիւնները: Եւ այդ ամենը զծուծ է նա աուր հնգնանքով և երգիծաբանի վարպետ վրձինով:

Դա արդէն բաւական նշանաւոր մի եւրեւոյթ է պարսկահայ իրականութեան մէջ և դրանով էլ բնորոշում է աշուղի կատարած դերը:

ԵՍ ՔՈ ՍԻՐՈՅՆ

(Այլի տղու տնտիս կրգերից)

Ես քո սիրոյն մայիլ ելամ,
Խելք ու միտքս կորցրել ամ.
Հանապարհս մոլորել ամ,
Թէ զոմ տեսնեմ քեզի ազիզ:

Քաղց լեզուդ ինձի խալէց,
Խելք ու միտքս զլինէս քաշէց.
Թամամ ջանս խալէց, մաշէց,
Քո խօշտաբ ու խաղն ազիզ:

Խօսման ամ, ջուկաբ չես տալման,
Փառակդ բռնէլ ամ լալման.
Ինձ խաբելով անց աս կալման,
Ախրին խղճա ինձի ազիզ:

Ձմեռ ե՞րբ ես խոր խոզէց խանեմ,
Ասա, ե՞րբ դու ինձ ճար կանես.

Գուցէ դեռ էլ յետացանես,
Ա՛ր մոռանալ դու ինձ ազիզ:

Գեղեցկութեամբդ ինձ մաշեցիր,
Սիրտս գոռ ինձմէ քաշեցիր.
Ջվան ամ, ինձ չխղեացիր,
Չէլնեմ քեզին կարօտ ազիզ:

Քո աչքերն բլբլջ ջան ա,
Յունքէրդ ալմագ ջուհար ա.
Ելայ քեզ ծառայ, ինչ կուզես արա,
Կեսնքս քեզի մատաղ. սիրուն ազիզ:

Իմ սիրելի, պատուական վարդ,
Համբոյր խնդրեմ, տուր ինձ անխնայ.
Շունչս զնաց, եմ կիսամահ,
Վայ թէ մեռնեմ իմ ջան ազիզ:

Ես քո սիրոյն խորովման ամ,
Քրակ և բոցում վառման ամ.
Վայ ինձ քեզին հեռաման ամ,
Ելա կարօտ քեզին ազիզ:

Այս երգը ձեռք ենք բերել 1921 թւին
Հնդկաստանում, Բոմբէյում, ձեռագիր մի
տաղարանից, որ գրւած է 1810 թւին:

ԱՐԱՐ ԻՐԵՄԵԱՆ

Քիֆլիս

22 դեկտ. 1929 թ.

ՋԱՐԹՈՒՄԻ ՋԱՆԳԱԿԸ

Իմ զարթումս անհամբեր
Դու կ'ըստասես փեղկիս տակ.
Նըւագելով զարթիթներ,
Թեւաւորւած հըրջտակ:

Երգերուդ մէջը կ'ըզգամ
Անոյշ յուզումն Աստըծոյս.
Որ կը հալի զերդ եղեմս,
Արեւուն մէջ իմ հոգւոյս:

Ահա կու գամ թեւաբաց
Հըրաւէրիդ ունկընդիր.
Գիշերուան մէջ երազած,
Քու երգերուն քաղցրալիր:

Բաց է սըրտիս պատուհանն
Նոր արեւու նոր կեանքի.
Մարգերուն մէջ հոտեան,
Քեզ իմ հոգիս կ'ընկերի:

Հ. ՎԱՀԱՆ ՅԱՎԱԵՆԻՍԵԱՆ